ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ընտանեկան բարդ և բազմաբնույթ հարաբերությունները մեր օրերում չեն կարող անմասն լինել տարաձայնություններից և առանձին հարցերի շուրջ ծագող վեճերից: Այսկերպ, համատեղ գույքի բաժանումը, ընտանիքում երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպումը, հայրության կամ մայրության վիճարկման հետ կապված հարցերը, երեխայի ապրուստը հոգալու ծնողների պարտականությունների բաշխումը, ներընտանեկան տարաձայնությունները կարող են պատճառ դառնալ ամուսնաընտանեկան հարաբերությունների էական լարման համար՝ առաջացնելով հուզական ցնցումներ ընտանիքի ներսում:

Նշված պայմաններում ընտանեկան հաշտարարությունն առաջարկում է արժեքավոր մեխանիզմ ամուսնաընտանեկան վեճերի կառուցողական և բարեկամական կարգավորման համար՝ խրախուսելով երկխոսությունը, հաշտեցումը և փոխըմբռնումը վիճող կողմերի միջև: Սույն հոդվածը նպատակ է հետապնդում ներկայացնել ընտանեկան հաշտարարության էությունը և առավելությունները՝ միաժամանակ հանդիսանալով ուղեցույց այն անձանց համար, ովքեր ցանկանում են Կենտրոնի կողմից առաջարկվող ընտանեկան հաշտարարության ծառայությունների միջոցով հաղթահարել գոյություն ունեցող տարաձայնությունները և հանգել փոխադարձաբար ընդունելի լուծումների:

(Ա) Ընտանեկան հաշտարարության էությունը

Ընտանեկան հաշտարարությունը, ինքնին, գործընթաց է, որտեղ չեզոք երրորդ կողմը՝ հաշտարարը, միջնորդում է երկխոսությունը վեճի մեջ ներգրավված ընտանիքի անդամների միջև՝ ձգտելով հասնել կողմերի հաշտեցման: Ի տարբերություն դատավարության՝ ընտանեկան հաշտարարության հիմնական շեշտադրումը կողմերի համագործակցության հիման վրա համակողմանիորեն ընդունելի լուծումների հանգելն է: Հաշտարարներն իրենց հերթին որակավորված մասնագետներ են, ովքեր կոչված են օգնելու վեճի կողմերին, տվյալ պարագայում՝ վիճող ընտանիքի անդամներին, թափանցիկ գործընթացի շրջանակներում բացահայտել իրենց

մտահոգությունները, վեճի հիմքում ընկած խնդիրները և մշակել փոխհամաձայնեցված լուծումներ, որոնք բավարարում են յուրաքանչյուրի կարիքներին։

Հաշտարարությունը ամբողջապես կամավոր գործընթաց է, ուստի՝ հաշտարարը չի կարող կայացնել որոշումներ կամ կողմերին պարտադրել կարգավորման իր տարբերակը։ Հաշտարարությանը բնորոշ ոչ ֆորմալությունը հաճախ թույլ է տալիս նիստերն ավարտել մեկ օրվա ընթացքում կամ շատ ավելի կարճ ժամանակահատվածում՝ կորցնելով ընդամենը հաշված ժամեր։

(Բ) ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընտանեկան հաշտարարության առավելությունները բազմաթիվ են, ինչի մասին են վկայում նաև տարբեր երկրներում այս եղանակի առնչությամբ իրականացված հարցումները։

Այսպես, ընտանեկան հաշտարարության արդյունավետությունը գնահատելու համար Միացյալ Թագավորության ընտանեկան հաշտարարության խորհուրդը (UK Family Mediation Council) 2019 թվականի աշնանն անցկացրել է հարցում, որի արդյունքում հավաքագրվել են 122 ընտանեկան գործերով մասնագիտացած հաշտարարների պատասխանները։ Վերջիններս հարցմանը նախորդող վերջին վեց ամիսների ընթացքում որպես հաշտարար ներգրավված էին եղել 2161 հաշտարարության գործերում։ Արդյունքները ցույց են տվել, որ հաշտարարության մասնակիցների 70%-ը գործընթացի արդյունքում հասել են ամբողջական կամ մասնակի հաշտության համաձայնության։

Այսպիսով, հարկ է ընդգծել, որ հաշտարարությունը արդյունավետ վեճերի լուծման եղանակ է գրեթե բոլոր ընտանեկան տարաձայնությունների պարագայում, առավելապես՝ երեխաներին առնչվող վեճերի առնչությամբ։ Ստորև ներկայացվում է այն հիմնական առավելությունները, որն առաջարկում է ընտանեկան գործերով հաշտարարությունը։

- **Հարաբերությունների պահպանում.** Ընտանեկան գործերով հաշտարարության առաջնային առավելություններից մեկը երկարաժամկետ հարաբերությունների պահպանման կարևորումն է։ Երաշխավորելով երկխոսության համար առողջ միջավայր՝ հաշտարարությունն օգնում է վեճի բռնկված ընտանիքի անդամներին հարգանքով արտահայտել իրենց մտահոգությունները և

տեսակետները նույնիսկ այն դեպքերում, երբ ուղղակի հաղորդակցությունը թվում է ոչ այնքան դյուրին: Ի տարբերություն ավանդաբար առավել տարածված դատավարությունների, որոնք կարող են առավել սրել առկա տարաձայնությունները և էլ ավելի լարել հարաբերությունները, հաշտարարությունն ապահովում է վեճի լուծում համագործակցային միջավայրում:

- **Գաղտնիություն.** Հաշտարարության շրջանակներում վերհանված ողջ տեղեկատվությունը համարվում է գաղտնի և հաշտարարության ընթացքում որևէ փաստի ընդունումը չի կարող հիմք հանդիսանալ դատավարության ընթացքում այդ փաստը հաստատված համարելու համար: Գաղտնիության այսօրինակ պայմանները ընտանեկան վեճի կողմերին ընձեռում են ազատորեն իրենց դիրքորոշումն ու կարծիքը հայտնելու հնարավորություն:
- **Վիճող կողմերի դիրքորոշումների կարևորում.** Ընտանեկան գործերով հաշտարարությունը հնարավորություն է տալիս ընտանիքի անդամներին ամբողջովին ներգրավվել վեճի կարգավորման գործընթացին և վերջնարդյունքում կայացնել որոշումներ, որոնք բխում են իրենց լավագույն շահերից: Միաժամանակ ապացուցված է, որ վեճի արդյունքի նկատմամբ «սեփականատիրության» զգացումը որպես կանոն ենթադրում է նաև ձեռքբերված համաձայնությունների անշեղորեն կատարում և ապագա տարաձայնությունների հավանականության նվազում:
- **Հավասար ներգրավվածություն.** Հաշտարարության առավելությունների թվում, ի թիվս այլնի, անառարկելիորեն կարելի է առանձնացնել նաև կողմերից յուրաքանչյուրի «լսված լինելու» և «գնահատված լինելու» արժեվորումը: Հաշտարարները կոչված են ապահովել այնպիսի պայմաններ, որը կողմերից յուրաքանչյուրին կտա իրենց մտահոգություններն ու համոզմունքներն արտահայտելու հավասար հնարավորություն՝ համակողմանիորեն ձևավորելով արդարության զգացում:
- **Երեխայակենտրոն մոտեցում.** Հաշտարարության հեռանկարային մոտեցումների լույսի ներքո նշանակալիորեն կարևորվում է երեխայի լավագույն շահերը ընտանեկան այն վեճերում, որտեղ շոշափվում են երեխայի իրավունքները: Երեխայի համատեղ դաստիարակման հանձնառությունը առաջին հերթին ենթադրում է ծնողների միջև կառուցողական հաղորդակցության առկայություն, ինչին էլ ծառայում է հաշտարարությունը՝ որպես հնարավոր վեճերի և տարաձայնությունների առաջացման պարագայում վեճերի լուծման եղանակ, որը չի հանգեցնում հարաբերությունների վատթարացման:

- **Հարմարեցված լուծումներ.** Հաշտարարության ընձեռած համակողմանի լուծումների արդյունքում, որպես կանոն, կողմերն ունենում են բավարարվածության զգացողություն, ինչն ապահովում է երկարաժամկետ կայունություն ներընտանեկան հարաբերություններում։
- **Գործընթացի ծախսարդյունավետություն և արագություն.** Ի համեմատություն երկարատև և ծախսատար դատավարության՝ ընտանեկան գործերով հաշտարարությունն առաջարկում է վեճերի լուծման առավել արագ և ծախսարդյունավետ տարբերակ։ Հաշտարարության հանդիպումները, այդ թվում՝ հանդիպումների հաճախականությունը, առաջին հերթին հարմարեցվում են կողմերի զբաղվածությանն ու գրաֆիկին, ինչը հնարավորություն է տալիս միևնույն վեճը դատարանից քանիցս ավելի արագ լուծել հաշտարարության միջոցով։ Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ խուսափելով երկարատև դատական պրոցեսներից՝ ընտանիքները կարող են խուսափել իրենց միջոցների չարդարացված վատնումից։

(Գ) ԸՆՏԱՆԵԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ընտանեկան գործերով հաշտարարության հաջող իրականացումը պահանջում է գործընթացում ներգրավվելու բոլոր կողմերի պատրաստակամություն և փոխադարձ ընդունելի լուծումներ գտնելու հանձնառություն։

Այս գործընթացի իրականացման հիմնական քայլերը ներառում են հետևյալը՝

1. **Հաշտարարության նախաձեռնումը**
    - Հաշտարարություն կարող է նախաձեռնվել ինչպես վեճը Կենտրոնին հանձնելու մասին կողմերի միջև նախնական համաձայնության առկայության, այնպես էլ դրա բացակայության պայմաններում։
    - Հաշտարարության համաձայնության առկայության պարագայում գործընթացը նախաձեռնվում է կողմերից մեկի գրավոր դիմումի հիման վրա։

- Նման համաձայնության բացակայության պարագայում կողմերը կամ կողմերից առնվազն մեկը կարող է առաջարկել վեճը հանձնել Կենտրոնին՝ Կենտրոն գրավոր հարցում ուղարկելու միջոցով։

2. **Հաշտարարի ընտրությունը և նշանակումը**
    - Հաշտարարության կողմերը կարող են Կենտրոնի հաստատմանն առաջարկել երկուստեք ընդունելի հաշտարարի թեկնածու։
    - Նման առաջադրման բացակայության պարագայում Կենտրոնը կողմերին է ներկայացնում տվյալ գործով հնարավոր հաշտարարների թեկնածուների ցանկ։
    - Կողմերը հաստատման համար ցանկից առաջադրում են հաշտարար եռօրյա ժամկետում։
    - Եթե կողմերը չեն առաջարկում որևէ թեկնածու, տվյալ գործով հաշտարարին նշանակում է Կենտրոնը։
3. **Հաշտարարության առաջին հանդիպումը**
    - Առաջին հանդիպումը նշանակվում է հաշտարարի հաստատումից / նշանակումից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում, բայց ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում։
    - Հանդիպման օրը, ժամը, վայրը, օրակարգը և այլ վերաբերելի հարցեր որոշում է հաշտարարը։
    - Հանդիպման ընթացքում հաշտարարը նույնականացնում է կողմերին (և նրանց ներկայացուցիչներին), այլ մասնակիցներին և կողմերի հետ միասին որոշում անցկացման ձևաչափն ու ընթացակարգը։
4. **Հաշտարարության ընթացքը**
    - Հաշտարարությունն իրականացվում է օրենսդրության, Կենտրոնի հաշտարարության կանոնների և ներքին իրավական ակտերի համապատասխան։

- Հաշտարարը չի կարող կողմերին կամ այլ մասնակիցներին տրամադրել իրավական խորհրդատվություն կամ հայտնել դիրքորոշում գործի բովանդակային որևէ հարցի վերաբերյալ:
- Հաշտարարը կարող է խնդրել տրամադրել հավելյալ տեղեկություններ, գրավոր հայտարարություն և այլն:
- Կողմերի համաձայնությամբ հաշտարարությունը կարող է իրականացվել համատեղ կամ առանձին հանդիպումների, ինչպես նաև դրանց համակցության եղանակով:
- Կողմերի համաձայնությամբ հաշտարարը կարող է ստանալ փորձագետի (մասնագետի) եզրակացություն:

5. **Հաշտարարության ավարտը**

- Եթե կողմերը գործընթացի արդյունքում հասնում են հաշտության համաձայնության, ապա այդ համաձայնությունը ստորագրվում է կողմերի կողմից և կնքվում հաշտարարի կողմից:
- Եթե կողմերը գործընթացի ավարտին չեն ստորագրում հաշտության համաձայնություն, հաշտարարը կազմում է հաշտարարության գործընթացի ավարտի մասին արձանագրություն:

Եզրակացություն

Այսպիսով, ընտանեկան գործերով հաշտարարությունն առաջարկում է արդյունավետ եղանակ ընտանեկան հարաբերություններում ծագող տարաձայնություններն ու վեճերը լուծելու համար: Խթանելով կառուցողական երկխոսությունը, նպատակ հետապնդելով պահպանել ամուսնաընտանեկան հարաբերությունների կայունությունը և հնարավորություն ընձեռելով գտնել փոխշահավետ լուծումներ՝ հաշտարարությունը կողմերին առաջարկում է վեճերի լուծման ժամանակակից տարբերակ, որն իր ապացուցված արդյունավետության շնորհիվ շարունակում է գրանցել պահանջարկի դինամիկ աճ:

Համագործակցային մոտեցումները, կողմերին առաջարկվող գաղտնիությունը և գործնական լուծումների վրա շեշտադրումը հաշտարարությունը դարձնում է

արժեքավոր վեճերի լուծման եղանակ այն ընտանիքների համար, ովքեր ունենալով տարաձայնություններ ձգտում են կառուցել առավել ամուր և առողջ հարաբերություններ:

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

+374 11 201 410

info@amca.am

ք. Երևան, Արշակունյաց պող. 51, 47 տարածք

Աղբյուրներ

- E. Wendy Trachte-Huber, Stephen Huber, *Mediation and Negotiation Reaching Agreement in Law and Business* (Revised 2nd ed LexisNexis).
- John M. Haynes, *The Fundamentals of Family Mediation,* (State University of New York Press).
- Sources: Christopher W. Moore, *The Mediation Process: Practical Strategies for Resolving Conflict* (4th ed Jossey-Bass).
- *Sorting Out Family Disputes Without Going Through Court,* Family Mediation Council, The Ministry of Justice of the UK. Available at: https://assets.publishing.service.gov.uk/media/5a800f33ed915d74e33f834d/family-mediation-leaflet.pdf
- Donal T. Saposnek, (2004), Commentary: The future of the history of family mediation research, 22 Conflict Resolution Quarterly, 37.